ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ԵՐԵՎԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փող. 108/4
Հեռախոս՝ (+37410) 650971, 650961
Ֆաքս՝ (+37410) 653809
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 650971, 650961
Fax: (+37410) 653809
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 650971, 650961
Факс: (+37410) 653809
Эл.почта: norkmarashmc@gmail.com

«03» դեկտեմբեր 2024թ.

<<Արֆարմացիա>> ՓԲԸ տնօրեն
Աննա Հովհաննիսյանին
Էլ. փոստ. tender@arpharm.am

Ծանուցում

(թիվ <<ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-15>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և <<Արֆարմացիա>> ՓԲԸ -ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 12.01.2024 թվականին կնքվել է ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/15-15 գնման պայմանագիրը(այսուհետև՝ նաև Պայմանագիր), որի կատարման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու մասին թիվ 1 համաձայնագիրը կնքվել է 13.06.2024 թվականին:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված է նաև <<պրոպոֆոլ>> դեղամիջոց՝ թվով 2600 հատ:

Պայմանագրով նախատեսված է, որ <<Ապրանքները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված պահանջներին, ընդ որում առաջարկվող դեղը պետք է գրանցված լինի դեղերի պետական գրանցամատյանում:>> Ինչպես նաև <<Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2024թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան **5 աշխատանքային օրվա ընթացքում**:>>

Ի թիվս այլ պատվերների, 07.11.2024 թվականին Ընկերությանը ներկայացվել է պրոպոֆոլ դեղամիջոցի մատակարարման պահանջագիր թվով 100 հատ քանակով, որից 50 հատը մատակարարվել է 08.11.2024 թվականին, իսկ մնացած 50-ը մատակարարվել է 15.11.2024 թվականին: Սակայն 15.11.2024թ. մատակարարած դեղամիջոցը չի հանդիսանում դեղերի պետական գրանցամատյանում գրանցված դեղամիջոց և չի համապատասխանում Պայմանագրի պահանջներին:

Պատվիրատուն 21.11.2024թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով դիմել է Ընկերությանը և հայտնել է, որ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն: Միաժամանակ Ընկերությանը տրվել է ողջամիտ ժամկետ՝ մինչև 02.12.2024 թվականը ներառյալ, և առաջարկվել իրականացնել փոխարինում՝ մատակարարված անհամապատասխան ապրանքը Պայմանագրին համապատասխանող ապրանքով: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի փոխարինվել մատակարարած դեղամիջոցը և չի մատակարարվել համապատասխանող ապրանք:

03.12.2024 թվականի դրությամբ Պայմանագիրը տվյալ ապրանքի մասով մասնակի կատարված է և չկատարված մասը հետևյալն է.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը ՀՀ դրամով	Չմատակարարված քանակը	Ընդամենը գումարը ՀՀ դրամով
72	Պրոպոֆոլ	հատ	439	520	228280

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»:

Պայմանագրի 2.1 կետով նախատեսված է.

<<2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի

.....

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,

.....

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի>>

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը էականորեն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ ողջամիտ ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանք, <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն որոշեց՝ միակողմանի **մասնակի(չկատարված մասով)** հրաժարվել Պայմանագրից՝ 72-րդ չափաբաժնի մասով, համարելով այն միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ

հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը (1150001612200100 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ

Կատ.
Գնումների բաժին
Հեռ. 010-650560